## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5*

**№ ԴԴ -3- Ն-842**

**« 19 » փետրվարի 2014 թ.**

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ՇՀԾՁԲ-11/6»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2014թ. մարտի 03-ը, ժամը 15:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժնի պետ Գ. Ներսիսյանը (հեռ. 010 511 788, 010 511 787 ):

Հայտերը կբացվեն 2014թ. մարտի 03-ին, ժամը 15:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «SRS Femida» ձայնագրման հատուկ համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ «SRS Femida» ձայնագրման հատուկ համակարգի սպասարկման ծառայությունների (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**

**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝ ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787